



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999

Բ. ՓՐԱԿՑԻՒ

ՓՈՐՁԱՌՈՒԻ ԹԻՇԱՐԻ ԽՐԱՑՆԵՐԸ

ԿԱՐ

ՀԱՅՈՍԱՆԱԼՈՒ ՄԻԶՈՑ

Թարգմանեց

Լ. Ռ. Փ. Ե. Ա. Յ. Յ.



ԹՏՈՒՅՑ

Ltn

2312

ՅԱՐՄԻԼՊՈԽԱՆՑ:

1875.

Բ. ՓՐԵՄԱԳԼԻՔ

ՓՈՐՁԱՌՈՒԻ

ԲԵՇԵՐԻ ԿՐԵՇՆԵՐԻ

40.0

ՀԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ



ԹԻՖԼԻԶ.

՚ի Տպարանի Յօվհաննեսի Մարտիրոսեանց:

1875.

ՅԵՐԱՎԻՆ

Дозволено цензурою. Тифлисъ. 24-го Мая
1875 года.

42312.60

28 2313

Типогр. Мартirosianца, на Михайловск. мосту.

Մեր գրականութիւնը շատ աղքատ է,
մանաւանդ ժողովրդական, թէ ինքնուրոյն
և թէ թարգմանական զբքոյներից։ Սյս
կարիքը շատ զգալի է մեր ազգի համար,
և յայտնի է, որ մի ժողովրդի մէջ ըն-
թերցասիրութիւն տարածելու համար ա-
ռաջ հարկաւոր է այնպիսի զիւրըմբունե-
լի զբքոյներ տալ, որ նրանց ուղեղն մար-
սի. զրդի նբանց դէպի ընթերցասիրու-
թիւն—հետևաբար զարգանալ։ (Աւ կի-
նէր, որ մեր գրագետ դասը ուշ դարձնէր
այս ամենակարևոր ինդրին։)

Կայ իսկ այս նպատակաւ թարգմա-
նեցի հանրածանօթ Բ. Ֆրանդ'նի սյս
զբքոյկը, որը վաղուց արդէն յայտնի է
լուսաւոր աշխարհին, և իւր ժողովրդա-
կան լինելուն պատճառաւ, աշխատում է-

ին, որքան կարելի է, շատ տարածել ամբողջի մէջ:

Քրոյկս թէ որքան է արժանաւոր և համապատասխան իւր վերնազրին, այդ թողումնեմ ընթերցողներին. միայն այս քանս կարող եմ ասել, որ մի հանճարեղ մարդոց զբաց վատ բան չէր զրուիլ այնպիսի մի մարդոց, որը ոչ թէ միայն լրկ զրում ու քարոզում էր, այլ և Ճիշտ հետևելով իւր առաջարկած կանոններին—ձշութեան, հաստատամութեան, աշխատասիրութեան և խնայողութեան, մշակութեան ստոր աստիճանից բարձրացաւ նախագահութեան բարձր աստիճանը: Այս մասին աւելորդ չեմ համարում նոյն իսկ Բ. Փրանզլինի խօսքերն առաջ բերել: «Ունուելով աղքատ և իմ երիտասարդական հասակս անցկացնելով աղքատութեան և անյայտութեան մէջ, վերջումն ես հասայ հարատութեան և փառքի: Բաղդը յաջողում էր ինձ իմ բոլոր ձեռնարկութեանն

մէջ. նա չ'թողեց ինձ, մինչև անդամ, իմ կեանքի վերջին թելու հասած ժամանակը»:

Գրոյկս նպաստակից հեռու լինելով Բ. Փրանզլինի ամբողջ կննապրութիւնը ամբողջապէս ամփոփել յառաջաբանիս մէջ, այնու ամենայնիւ աւելորդ չեմ համարում մի համառօտ հայացք ձգել նրա վերայ:

Բ. Փրանզլինը մի մոմավաճառ աղքատ մարդոց որդի լինելով՝ նա հարկադրուած էր իւր պատենեկութեան հասակում մշակութիւն անելով հաց ճարել. նա առաջին անդամ մաս մէկ տպարտնե, որ տեղ իւր շափազանց ընդունակութեամբը շռտով ասլորեց զբաշարութեան արուեստը: Երկար անյաջողութիւններից և մինչև անդամ դժբաղդութիւններից յետոյ, նա Փիլադելֆում ստացաւ մի նշանաւոր տպարանի կառավարչի պաշտօն. այս տեղ նա փոքր ինչ ապահովացրեց իւր վիճակը: Հենց այս ժամանակից սկսումէ իւր գործնէութիւնը.—մասնակցումէ իւր հայրենիք

քի վերաբերեալ հասարակական գործերին,
հիմնումէ հասարակական ընթերցարաններ
և գրականական ընկերութիւններ, հրա-
տարակումէ ըրադիր և օրացոյցներ, որոնք
ամբոխի զարգացմանը մեծ զարկ էին տա-
լիւ: 1736 թ. նա մտնումէ տէրութեան
ծառայութեան մէջ և վարումէ ատենա-
դպրի պաշտօն: 1747 թ. ընդրվումէ Պէտ-
սիլվանի ազգային ժողովի պատգամաւոր:
Նա իւր արտօնութիւնից օգուտ քաղելով՝
համոզում է ժողովին դէպի գործնէու-
թիւն—ուշ դարձնել ազգային լուսաւո-
րութեան վերայ, հիմնել ուսումնարաններ,
հիւանդանոցներ. մի և նոյն ժամանակը նա
ջանասիրութեամբ պարապում է և զի-
տութիւններով. շատ օգտակար զիւտեր է
անում ելեբուրական գորութեան վերաբե-
րեալ և հնարում է կայծակնառ. (грոմօտ-
եօդ): 1753 թ. նա ստանում է Հիւսի-
ային Ամերիկայի փոստի գլխաւոր կառա-
վարչի պաշտօն. իսկ 1757 թ. նա ու-

զարկվում է օնդօն իւր հայրենակիցների
իրաւունքները պաշտպանելու նպատակաւ:
Այս դժուար և ծանր յանձնարարութեան
ժամանակ, 1765 թ. նրան յանդրվում է
պաշտպանել կօլոնիայի (գաղթականների)
մի քանի իրաւունքները. նրա հաստատ
փաստերին և ապացցյներին նայելով Անդ-
զիական պարլամենտը (արդարադատու-
թեան գաղարանը) փոխում է զրոշմա-
թղթերի մաքսի վերաբերեալ անարդար
վճիռը: 1775 թ. Անդզիայի և Հ. Ամե-
րիկայի մէջ ծագած երկպառակութիւն-
ները վերջացնելուց յետոյ, Փրանզլինը յետ
է գտնում կօնդօնից և իսկըն Պենսիլ-
վանից պատգամաւոր է ընդրվում Կօնդրե-
սին (ընդհանուր քաղաքական ժողովին):
Կօնդրեսում նա մեծ ջանքով աշխատում
է գաղթականների ակատութեան հա-
մար: 1776 թ. Բ. Փրանզլինը գաղանի
յանձնարարութեամբ ուղարկվում է Ֆրան-
սիայ— օգնութիւն խնդրել կուդովիկոս

XIVից: Փարփռում՝ նրան լնդունեցին շատ
մեծ յարգանքով: 1778 թ. նա հասաւ
իւր նպաստակին, որի համար աշխատում
էր:

1783 թ. Բ. Փրանդլինը ստորագրում է
իւր հայրենիքի անկախութեան դաշնա-
դրութիւնը: 1785 թ. նույն է զառ-
նում՝ Ամերիկայ: Յետ դառնալուց ժողո-
վուրդը ընդունում է նրան մեծ հանդի-
սով և պատուիլ և խոկոյն նշանակում է
Պետականի նոհաննդի նախադահ:

1788 թ. Բ. Փրանդլինը թողնում է
աւերութեան ծառայութիւնը, իսկ 1790
թ., նա մեռնում:

Բ. Փրանդլինը մի նշանաւոր քաղաքացի
մի և նոյն ժողովակ խոհագետ, ուսումն
նական և վերին աստիճանի բարոյական
մասդ էր: Նրա միակ ձգտումն էր հաս-
տատամուռթեամբ և անընդհատ աշխա-
տելով ժողովրդի բոլոր թշուառութիւնների
առաջն առնել: Բայց սրանից նա բարոյա-

պէս մեծ ներդործութիւն ունեցաւ: Իւր
հայրենակիցների վերայ և մեծ զարկ տու-
աւ ազգային գրականութեանը, որնոցից
առնանշանաւոր անդը բոնումէ այս մեր
թարգմանած «Փորձառու Ֆրանչարի խրառ-
ները»:

Այս գրքոյին առաջին տպագրութիւնը
եղաւ Ամերիկայում 1732 թ. իրեւ յա-
ւելուած իւր օրացոյցի, որտեղ 25 տարի
շարունակ տպագրվում էր: Փրանդլինը՝ ի
նկատի ունենալով, որ օրացոյցները շատ
են տարածվում մինչև անգամ և հասաւ
րակ ժողովրդի մէջ, որոնք ընթերցանու-
թեան համար ուրիշ զրքեր չեն առնում,
որա համար նա իւր օրացոյցը հարստա-
ցնում էր այսպիսի բարոյական խրառնե-
րով: (*) Փրանդլինը զլիսաւորապէս ուշ էր

(*) Արդարեւ օրացոյցների միջնորդութեամբ, որոնք
այսպիսի զեղեցիկ խրառներ են բովանդակում, կարե-
լի է մի մեծ զարկ տալ եւ մեր հասարակ ժողովր-
դին, որոնց մէջ խրաբանցիր տարի մի քանի հազար

դարձնում և գրդուռմ՝ ժողովրդին դեպի
աշխատասիրութիւն և խնայողութիւն,
ինչպէս ամենալաւ միջոց ժողովրդի բա-
րեկեցութեան և առաքինութեան։ Այս-
պիսի բարոյական առակներից (ինչպէս կը-
տեսնէք զբքոյկիս մէջ) էր բարդանում
նրա օրացոցը գեռ 1732 թ. Այս զբքոյկը՝
«Փորձառու Ռիշարի խրանները» ընդհան-
րացաւ ժողովրդի մէջ և մեծ ներգործու-
թիւն ունեցաւ նրանց վերոյ։ Այն ժամա-
նակուայ ամերիկական և անգլիական բո-
լոր լրագիրները ամբողջապէս տոպագրեցին
այս զբքոյկը իրանց թերթերում։ Մի և
նոյն ժամանակ Փրանշայում լցու տե-

օրինակ տարածվում է. — ննտեւաբար կարելի է շար-
ժել նրանց դէպի ընթերցատիրութիւն։ Բայց ցաւելով
պէտք է ասել. ի՞նչ բաններ են բովանդակում մեր օրա-
ցոյները..... Նրանք բացի եկեղեցական չոր ու ցա-
մաք տօներից ոչինչ նոր նիւթ չն առաջարկում ըն-
թերցողներին։ Մի բանիք փորձ փորձեցին եւ այն
միայն անհոռնի յաւելուածներով լրցրին թերթերը։

աան մի քանի թարդմանութիւններ, և ժո-
ղովրդի մէջ շատ տարածելու համար աշ-
խատում էին թէ հոդեոր և թէ մարմնա-
որ կառավարութիւնները։

Փրանզլինի համառօտ կենսագրութիւնը
տպագրվում էր 187—թ. «Արարատ ամ-
սագրում» նատ հաւանական է, որ առան-
ձին տպագրուած լինի։ (*) Խորհուրդ կը-

(*) Թէ եւ Ս. Էջմիածնայ տպարանը իւր գոյութեան
օրից յետոյ մի այնպիսի ժողովրդական զիրք չէ տպա-
գրել, ոչ միշտ աստուածաբանական, սկստմական—
մասնագիտական։ Բայց զարմանումնը, թէ ինչո՞ւ ի-
րանց ունեցած տպագրութիւնները ամբողջապէս պահ-
պանում են խեղի մէջ. ինչո՞ւ չն ուղարկում թիփ-
փղու հայ դրականաւներին կամ իրանց գործականե-
րի միջնորդութեամբ չն աշխատում տարածել մեր
ժողովրդի մէջ։ Հայ հասարակութիւնը այնքան զար-
գացած չէ, որ զրբերի արժանաւորութիւնները եւ նը-
րանց կրթողական նշանակութիւնը ճանաչի յայտարա-
րութիւններից..... Հայը մինչեւ աչքով չէ տեսնում եւ
մեռքով չէ շոշափում, ոչ մի բանի ծեռնամուխ չէ լի-
նում ուրեմն եւ Ս. Էջմիածնում տպագրուած զրբ-

տայինք տմենքին կարդարու այս խոհեմ,
Հաստատակամ և հանձնարաւոր մարդոց
կենապղութիւնը, որից կարելի է կեան-
քի դասեր առնել:

Թարգմանուշը:

Եթէ մէկը ձեզ ասի, թէ
կարելի է հարստանալ առանց
աշխատանքի և խնայողութեան,
մի՞ք հաւատալ նրան.— նա
թունաւորիչ է:

Բ. Փրառավուն:

Իերօ ամբողջապէս խցերումն կ'մնան, բանի որ այս
կերպով կրտարուին, կամ առեփ բան ասես, չեն առա-
ջարկիլ մի հայի, որ իւր իւ թ թ ի համար հայերէն
դիրը առնել:

Փորձառու Քիշարի Խրատները

Կամ

Հարստանալու Ճանապարհ

Համաձայնեցէք, սիրելի կարդացողներ,
որ ոչինչ բան այնքան ախորժելի չէ կա-
րող լինել մի հեղինակի, որքան հանդիպելն
ուրիշի շարադրութեան կամ քարոզի մեջ
իւր մեզհական դաշտարների հակումն
ունենալն և մատնանիշ անելն: Այս պատ-
ճառով գուք կարող եք եզրակացնել, թէ
որքան ես բազզաւոր էի զգում ինձ՝ ակա-
նատես լինելով այն անցքին, որը մտադիր
եմ ձեզ պատմել:

Մի քանի օր պրանից առաջ ես անց-
նում էի մի խումբ մարդկանց միջով, կան-

գնացնելով իմ ձին, տեղեկացայ, որ այդ
մարդիկը ժողովուել են աճրտախօսութեան
(տօրզի) նպատակաւ։ Աճրտախօսութիւնը
դեռ չսկսուած, նրանք վիճում էին զա-
նազան հարցերի, զիսաւորապէս ներկայ
ժամանակիս դժուարութիւնների վերայ։

Ներկայ գտնուողներից մէկը, մօտենա-
լով մի պատշաճ հագնուած ծերունու-
ասաց «ինչ» էք կարծում դուք, հայրիկ,
ներկայ ժամանակիս վերայ. Շշմարիտ չէ՞
որ ծանր հարկերը բոշրովին քանդում են
մեր երկիրը և մենք դժուարանում ենք
վճարել. դուք փորձուած մարդ էք, ինչ
խորհուրդ կրտաք որս առաջն առնելու
համար։»

«Օ երունին փոքր ինչ մտածելուց յե-
տոյ պատասխանեց. «Եթէ այդ մասին դուք
ցանկանում էք իմանալ իմ կարծիքը, ես
կասեմ ձեզ կարծ խօփերով, ինչպէս ե
ասում է Փորձառու Իիշարը աճշտառելունը
շապահաստանեան չե իշխառա»

Վայս տեղ խումբը շրջապատեց ծերու-
նուն, խնդրելով, որ նա բացատրի, և նա
շարունակեց։

«Չեր բողոքը իրաւացի է. իմ բարեկամ
ներ, Շշմարիտ, որ հարկերը ծանր են.
միայն եթէ մենք վճարէինք այնքան, որ-
քան կառավարութիւնն է պահանջում,
այն ժամանակը, գոնէ, կարելի էր մի կեր-
պով հեշտացնել դժուարութիւնները, բայց
կան և սյնպիսի հարկեր, որոնք սաստիկ
ծանր են մեզնից շատերի համար. զրօրի-
նակ. մենք վճարում ենք երկու անգամ՝
շատ մեր ծուլութեանը, երեք անգամ՝
մեր հպարտութեանը, չորս անգամ՝ մեր
անխոհեմութեանը. այս հարկերի համար
չենք կարող պահանջել՝ ոչ ժամանակ և
ոչ շափաւորութիւն. բայց յուսահատել
հարկաւոր չէ, եթէ մենք կը հետեւնք փոր-
ձառու Իիշարի խրաններին։ Օգնիր քեզ
դու ինքդ. ասում էր նա, «Աստուած էլ
քեզ կօգնիւ Ուրեմն լսեցէք։»

1) Սի որ և իցէ կառավարութիւն Նթէ
պահանջում է իւր հպատակներից իրանց
ժամանակի մէկ սասներորդ մասն, այդ
մէնք անարդարութիւն ենք համարում,
բայց մէնք մէր ծուլութիւնով աւելի շատ
ժամանակ ենք կորանում։ Պարտադիւնից
առաջնումեն շատ հիւանդութիւններ,
որոնք կարձայնումեն մարդուս կեանքը։
Պարապութիւնը ժամդից աւելի է ուտում
մարդուն, քան թէ գործը։

«Ի՞նանալիքը փայլում է, քանի որ նա
գործածութեան մէջն է զանվում։» ասում
էր փորձառու Ռիշարը։

«Եթէ գուք սիրում եք կեանքը։» աւել-
սցրեց նա, «ուրեմն մի՞ք կորանիլ ժամա-
նակը։ նա մէկ թէլէ, որից բազկանումէ
մէր կեանքը։» Ուրան աւելորդ ժամանակ
ենք կորանում մէնք, մոռանալով, որ քը-
նած աղուեար հաւ չէ բռնում, և թէ
մէնք երկար ժամանակ կունանք քնելու։
գերեզմանի մէջ։»

«Եթէ ժամանակը մի ամենաթանգա-
ղին դանձ է, ուրեմն նրան կորսնել կը-
նշանակէ անձնատուր լինել աններելի շոայ-
լութեան։ Կորսրած ժամանակն էլ չէ վե-
րադառնում։ որքան էլ նա շատ լինի մեզ
քիչ կ'երենայ։»

Ու եմն դէպի գործ։ Եթէ սկսենք ջա-
նասիրութեամբ գործել, շատ բան կը շե-
նքն փոքր աշխատանքով։ Դործունեայ
մարդոյ համար աշխատանքը (փիզիկապէս)
զգալի չէ։

«Պարապութեան սովորութիւնը բոլոր
զբաղմունիքը ծանրացնում է։ իսկ աշխա-
տանքինը՝ թեթևացնում։ Այ ուշ է արթ-
նանում քնից, նա իւր բոլոր օրն անց է
կացնում պարապութեան մէջ, իսկ երե-
կոյեան սկսում է աշխատել։ Ծուլութիւնն
այնպէս կամաց է քայլում, որ աշխատու-
թիւնը շուտով է հասնում քամակից։
Դու ինքդ հարկազրի՛ք քո գործերին, մի՛
սպասիր, որ նա քեզ հարկազրի։ Վաղ-

արթնացիք վաղքնի՞ր, կը լինես առսղջ,
հարուստ, միշտ պարզ մսքով և զուարժ
դէմքով։ Այս բոլորն նոյնպէս վորձառու
Ռիշարի խօսքերն են։

Եւ արդարեւ. ինչ կընշանակէ անդա-
դար սպասել և յուսալ մի յաջող ժամա-
նակի, քանի որ մեր ապագան մեր սեպ-
հական ձեռքին է։ Հարկաւոր է գործել,
ոչ թէ երեւակայել և յուսալ ով միայն
յուսով է ապրում, նա կը մեռնի քաղծա-
ծութիւնից. առանց աշխատանքի մարդ
չէ վարձատրվում։ Նթէ դու մի կտոր հող
ունիս թէ ոչ, մի և նոյնէ. դու պէտք է
աշխատես. իսկ եթէ ունիս և գործ չը
դնես քո աշխատանքը նրան մշակելու, այն
ժամանակ նա կանցնի հարկահանի կամ
պարտատիրոջ ձեռքը։ Ամեն մի արհեստ
և ամեն մի աեսակ կանօնաւոր պարապ-
մունք մի անսպառ աղբիւր է, որից բԸՆ-
խում է օգուտ և յարգանք. բայց պէտք է
և հետեւ մի որոշ նպատակի, առանց

որոյ իզուր կը կորչեն մեր բոլոր աշխա-
տանքը։ Նթէ մենք աշխատասէր ենք, եր-
բէք չոպէտք է վախճանանք անյաջողու-
թիւններից. որովհետեւ սովոր նայում է
միայն աշխատաւորի բնակարանին, բայց
չէ համարձակվում ներս սողալ. նոյնպէս
ներս չէ մանում աշխատաւորի բնակարանը
ոչ պարտատիրը և ոչ ոստիկանութիւնը։
Պատճառն շատ պարզ է. աշխատանքը մար-
դուն տալիսէ կարողութիւն վճարելու
իւր պարտքերը. իսկ հակառակ դէպքում,
ծուլութիւնը և յուսահատութիւնը բազ-
մապատկում են իւր պարտքերի քանա-
կութիւնը։

Մ'ի՞ յուսաք, որ գանձ կը դանէք, կամ
ժամանակաւ ժառանգութիւն կըստանաք.
աշխատանքի ծիշտ հետեւանքը՝ երջանկու-
թիւնն է. Աստուած էլ է օգնում աշխա-
տաւորին։ Ուրեմն աշխատեցէք անդաբար
և այն միջոցում, երբ շատերն իրանց նու-
իրել են քնին. դուք զուարձալի կերպով

բաւականութիւն կրստանաք և առան կրվարձատրուիք:— Եսօրուայ դործերն չենց էս օր վերջացրեք, որովհետեւ չեք կարող իմանալ թէ վաղը ինչ կրպառահի: «Մէկ էս օրը,» ասում է փորձառու Ռիշարը, արժէ երկու էզուծուայ. Էս օրուայ գործն վաղուան միք ձգել, քանի որ կարող էք էս օր կատարել:»

«Եթէ դուք մի բարի մարդոյ ծառայ լինեք, իհարիէ ձեղ համար ամօթ կը լինէր, եթէ նա միշտ տեսնէր ձեզ պարապութեան միջ: Դուք բոլորեքեանքդ ձեր ծառաներն էք, ամաչեցէք ուրեմն ձեզանից ձեր պարապութեան պատճառաւ ամաչեցէք նոյնպէս ձեռքներդ ծալած նառել, երբ դուք շատ գործեր ունիք թէ ձեր սեփհական, թէ ընտանեկան և թէ հայրենիքի վերաբերեալ: Միք արհամարհիլ աշխատանքը, ինչ անասկ էլ որ նա լինի. միք պահպանիլ ձեր ձեռքերը անգործածութեան միջ, անխոնջ աշխատանքով պա-

րապեցէք ձեր գործերով, և միք մոռանալ որ կատուն ձեռնոցներով մուկ չէ բռնում:

«Հմարիտ է, որ այս շատ հեշտ բան չէ և կարելի է, որ ձեր ույժն աւելի թոյլ է, իսկ ձեր ձեռքերն անսպիզ են աշխատելու. բայց միք յուստհասուեիլ. հաստատ յուսով հրաշքներ կը գործէք. ժամանակը յազգեւում է բարբին. — Չուրը կամելով ծակում է քարը. — մուկը կրծելով կարում է հաստ պարանը. — կայնի թոյլ հարուածից դպրում են դարեւոր կաղնիները:

Մի քանիսը, դուցէ հարցննն, «մի թէ՞ մարդ մի բոսկ չպահաքէ հանդստանայ.» Նրանց կրպառասխանեմ դարձեալ փորձառու Ռիշարի փոռքերով. «Իմասդիր ժամանակի գործածութիւնը ինչպէս հարին է, եթէ կամենում ես հանդստութիւն վայելը. և որովհետեւ դուք չեք կարող պատասխանիլ ձեր կեանքի ընթացքում կոր-

ցրած ամէն մի վայկեանի համար, ուրեմն
միք կորսնիլ և ոչ մի ժաման Մի ազատ
բոպէում դուք կարող էք մի օգտակար
բան շնորհիլ: Դործունեայ մարդը միշտ գործ
կը գտնի, իսկ ծցյլ՝ և ոչ մի ժամանակ.
որովհետեւ աշխատափիրի հանգստութեան
և ծովի կեանքի մէջ մեծ տարբերութիւն
կայ: Նատերը կրցանկանային ապրել հան-
գստութեան մէջ, առանց ոչինչ աշխա-
տանքի. այսպէս մտածողները, անկասկած,
կը կործանուին. ընդ հակառակը աշխա-
տանքը տալիս է մարդուս հարստութիւն,
բաւականութիւն, առատ եկամուռք և
ընդհանուր յարգութիւն: Հեռացէք զու-
արձութիւններից նրանք իրանք ձեր յե-
տելից կը վագեն: — Պութածան գեղջկու-
հուն ոչինչ պակասութիւն չունի, չնա-
յելով, որ նրա հագուստը կայանումէ հա-
սարակ կոտալից. նա ապրում է առատու-
թեան մէջ, և բոլորն նրան յարգանքով
գլուխ են խոնարհեցնում:

II) Հացի աշխատափիրութիւնը, մեզ
հարկաւոր է և հասպատականութիւն ան-
դադար ուշադրութիւն դարձնել մեր գոր-
ծերին. և միշտ վերահասու լինել: Բնակու-
թեան տեղը շուտ շուտ փոխելով, նոյնպէս
չէք կարող երջանիկ ապրել: — Երեք ան-
գամ անափոխութեան ծախքը հաւասարէ
մի հրդէհից առաջացած վեստի:

Մեր փորձառու Ռիշարը ասում է. «^{Օքա-}
րի եղե՛ր զէպի ուրիշները, փոխարինը կը-
ստանաս. եթէ ցանկանում ես, ^{Ո՞ր} բոլո-
լոր գործերը ճշութեամբ կատարուին,
այն ժամանակը պարտաւոր ես դու բնու-
անես, կամ վերահասու լինես նրանց կա-
տարողների վերայ. իսկ եթէ կուղարկես
մշակներին և դու ինքդ վերահասու չե՛ս
լինել նրանք ոչինչ չեն շնորհի: Ով ցանկա-
նում է երկրագործութեամբ պարապելով
հարստանալ, նա պէտք է փոքր իշտոէ
հասկացողութիւն ունենայ այդ մասին. և
պարտական է նոյն իսկ ինքն մշակել (կա-

ռատվարիւ) կամ վերահստու լինել: Շատ անդամ վերահսյեցողութեամբ աւլի շատ բան է շնչվում, քան թէ ձեսներով, և շատ անդամ անհոգացողութեամբ բացակայ լինելն աւելի է վիճակում մարդուն, քան թէ տպիտութիւնը: Վերահստու չը լինել իւր ծառաների և մշակների գործերին, կրնշանակէ առաջարկել իւր փողերի փակը նրանց անօրէնութեանը:

Վերկայ ժամանակում, քանի որ մարդիկ հաւասարապէս չեն զարգացած, շատ անդամ մէկի չափազանց հաւատարմութիւնն ենթարկում է իրան գմբարութեանը. իսկ անհաւատարմութիւնը՝ ապատում է: Զանասեր մարդք շատ սկսուզներ է, քաղում. եթէ ձեզ ցանկալի է ունենալ հաւատարիմ և հնապանդ ծառաներ, ծառայեցէք ձեզ դուք ինքներդ: (*) Շատ ան-

(*) Այս առմավ պատուելի հեղինակը չէ, մերժում ծառաներ ունենախ, կամ չէ ուղում ասել, որ ծառաները բորբն էլ լինում են անհաւատարիմ եւ անհնա-

դամ ամենաչնչին պատճառներից ծնվում են գրբազութիւններ: — Պայտից (նալից) վեր է ընկնում մէխը, դուք նրան կորսնում եք. բայց առանց պայտի վնասվում է ձին, իսկ առանց ձիուն՝ ձիաւորը, որի քամակաց թշնամին համեմուլ սպանում է նրան: Բայց ինչ էր էս բոլորի պատճառն. ձիաւորի անհոգութիւնը, որ ուշչի դարձրեց պայտից վեր ընկնելու մէխին:

III) Իմ բարեկամներ! կարծեմ ես բաւական երկար խօսեցի աշխատասիրութեան և գործունեութեան վերայ. ցանկալի է ինձ մի քանի խօսք ասել և խնայողութեան վերայ, որը մի և նոյն ասովիճանի հարկաւոր է: եթէ մէնք ցանկանում ենք մէր աշխատանքի պատուզներն լիովին վայեկը: Սին մարդը, որ իւր եկամնաքից մի մարդ չպահպանէ նեղ օրուայ համար, նա իւր բոլոր կեանքի ընթացքում աղքատութեան

զանդ, այլ՝ թէ իւրաքանչիւր մարդ ու արտականէ տնտէս լինել:

մէջ կ'ապրի և կըմեռնի առանց մի քանի
կոպէկ ժառանգներին թուներու։ Ով սո-
վոր է ուտել զէր պատառը, նա լղարը չի
սիրիլ։— Հասարակութեան մեծ մասը աղ-
քատութեան ճանապարը ընկաւ այն ժա-
մանակից, երբ կանայքը տնային տնաէ-
սական գործերը թողացին և ճահարակն
ու ոստայնանկը փոխարինեցին թէյի և
նոր մօդաների. իսկ մարդիքը խուփն ու
արօրն— արազի։ Նթէ յանկանում էք
հարստանալ սովորեցէք, գոնէ, յետ ձգել
ձեր եկամուտքից մի ամենափոքր մասը.—
որքան եկամուտք ունիք, բոլորն միք մըս-
խիլ. այլ ձեր ծախսերը այնպէս չափաւո-
րեցէք, որ եկամուտքից չ'աւելանայ։

Ուղղէք ձեր հարուստ հագուստները,
շուտով կրտենէք, որ էլ չէք տրտնջալ
ոչ ժամանակի դժուարութեան, ոչ հար-
կերի ծանրութեան և ոչ էլ տնային շատ
և զանազան ծախսերի վերայ։ Թղթա-
խաղն, արբեցողութիւնն և անտնտէս

կանայքը մարդոյ բոլոր հարստութիւնը
հաւասարացնում են զրօյի (ոշնչի) և բազ-
մապատկում են կարեքների և պարտքերի
թիւն և այս կերպով զիմում են զէպի
յանցանք. աւելացնում է փորձառու Ռի-
շարը, օվերոյիշեալ յանցանքներից մէկին
հետեւելն, աւելի թանգ է նստում մար-
դուն, քան թէ երկու որբ երախայի սը-
նդել։¹⁰

Դուք, շատ կարելի է, կարծում էք,
որ մի փոքր քանակութեամբ թէյ, մի
քանի բաժակ զինին, երբեմն մի աւելորդ
բաժին կերակուրը, գեղեցիկ հագուստը,
ձեր բարեկամներին հետ կառքերով շրջա-
կացին ոչինչ զժբաղատութիւն չ'են պատ-
ճառիլ բայց մ' մոռանաք, որ փոքր աղ-
քիւներիցն է դրյանում մեծ մեծ գետերը
Պահպանեցէք ձեզ մանր ծախսերից. շատ
անգամ ահազին նաև փոքր պատառուած-
քից կործանվում է ամբողջ նաւն։— Քմա-
սէրները աղքտուանում են. — յիմարները

ինչոյքներ են պատրաստում, իսկ խորա-
մանկները նրանց ծախսով կշտանում:

Դուք, ահա զորօրինակ, հաւաքուել
էք այստեղ նրա համար, որ առնեք որ-
պիսի և իցէ մի նշն բան, և այդ շատ
բարի և լաւ բան էք կարծում. այն ինչ
ձեր բարի կարծած բաները շատերիդ հա-
մար կարող է դժբաղսութիւն պատճա-
ռել:

Դուք համեմատելով աճրով վաճառ-
ուելիս ապրանքի գները վաճառանոցի գնե-
րի հետ, կրտսենէք, որ արդարեւ աճրա-
խօսութեան ժամանակ շատ էժան է վա-
ճառվում, և դուք այս բանով զբաւուելով
կը գնեք շատ նշն բաներ. բայց որովհե-
տեւ զբանէք անպէտք և աւելորդ բաներ են,
ուստի և բոլորովն աւելորդ է գնելն: Մի՛
մոռանաք փորձառու թիշարի խօսքը. Օթէ
սկսուս անպէտք բաներ գնել, շուտով կը
վաճառես պիտանիները: Նա խորհուրդ է
տալիս բոլորովն զդուշանալ էժանութիւ-

նից, որովհետեւ շատ անդամ դրաւուելով
էժանութեանը՝ առնում ենք այնպիսի բա-
ներ, որոնք բոլորովն մեզ հարկաւոր չեն.
սրանով մենք միայն թեթևայնում ու
դարտակում ենք մեր զբանը և աւելի
վասս ենք ստանում, քանի թէ, օգուտ: Նա-
մերը այսպիսի էժան բաներ առնելով սր-
նանկանում են: Վի՛թէ յիմարութիւն չե՞
ասում է Թիշարը, ոոր մարդս իւր կոպէկ-
ներով աշխատած փողերը վճարի այսպիսի
անպէտք բաների, կամ աւելի լաւն ասել
ցաւիւ: Քիչ օրինակներ չենք տեսնում:
շատերը զըկում են իրանց ամենահարկա-
ւոր կարիքներից, միայն նրա համար, որ
իրանց կանանցը զարդարեն նորանեւ հա-
գուատով. այս նպատակի համար, շատերը
մինչև անզամ քաղծած են թողնում ի-
րանց ընտանիքը: Մախմուրը, ատլատը և
շատ այսպիսի թանդաղին բաներ հանդ-
ցնում են վառարանի կրակը. (քանդում են
մարդոյ տուն.)» ասում է փորձառու Թիշ-

շարը։ Եւ չընայելով, որ այդ բոլորի կարեքը զգալի չէ, և մինչև անգամ մի առանձին յարմարութիւն էլ չ' տալիս։ Այս կերպով միայն միշտարվում են թեթևամիտ մարդիկը, որոնք զմայլելով իրանց կանանց թանգագին շորերի փայլմունքից, աշխատում են հաւատացնել իրանց, որ այդ բոլորն անսպատճառ հարկաւոր է։ Այսպիսի անխոհեմութիւնից մարդիկ, (շատ անգամ և զարգացած դասից) համում են աղքատութեան վերջի կէտին։ Հարկադրվում են պարտք առնել այնպիսի մարդկանցից, որոնք իրանցից նիւթականապէս շատ ստոր վիճակում էին, բայց ապահովացրել են իրանց դրութիւնը աշխատափրութեամբ։ այս հաստատում է նոյն փորձառու Ռիշարի հետևեալ խօսքերը։ ուսների վերայ կանգնած գիւղացին աւելի բարձր ու յարգլի է այն աղնուականից, որ սողումէ ծնկների վերայ։ Նթէ մի քանիսը պատահամր

մի փոքր ժառանգութիւն են ոտանում, «այժմ մեր բարեկենդանն է» ասում են։ «Էլ այսուհետեւ պաս չի կարող լինիլ։— կամ մի՞թէ չնչին ծախսերը մեղ կըքանդեն։ Բայց այդպիսի պարզամիտները մոռանում են, որ խաշամանից անդադար հանելով հայսը (տիստմորը) և ոչինչ չ' աւելացնելով նրա վերայ, շուտով կարող ենք հասնել յատակին։— կամ թէ ջրի գինը այն ժամանակ միայն կարող ենք իմանալ, երբ մեր ջրհորը կըցամաքի—և փողի գինը այն ժամանակ՝ երբ պարտաւորուած կըլինինք փոխ առնել։ Ով սովոր է պարտք առնելու, նրա կեանքը միշտ ենթարկվում է անհանգստութեան և վտանգի։ Շատ անգամ է պատահում, երբ պարտատէրերը որոշեալ ժամանակին ցանկանում են յետ ստանալ իրանց փողերը, հազար ու մէկ անբաւականութիւններ են լսում իրանց պարտապաններից։ «Արտաքին շքեղութիւնը, իսկապէս դժբաղդութիւն է.

մարդս երբէք անձնատուր չուպիսի լինի
այսպիսի հաճոյքների, առանց առաջուց
իմանալու իւր գրպանի դրութիւնը: «ՀՀ-
ողարքառական» ասում է փորձառու Ռի-
շարը «աղքատութիւն է, որը նոյնպէս
բարձր է գոռում, ինչպէս կարիքը. միայն
դանապանութիւնը նրանումն է, որ առա-
ջնի ձայնը աւելի յանդուգն է.» Դիցուք
թէ դուք առել էք մէկ լաւ բան. բայց
մի և նոյն ժամանակը հարկաւոր է նրա
հետ և ուրիշ շատ բաներ. հարկաւոր է
պահպանել առաջնին ցանկութիւնը, որով
հետեւ այս շատ հեշտ է մերժելը, քան թէ
հետեւ կատարելու առաջնին ցանկութիւ-
նից առաջնալու պահանջները: Այն աղ-
քարք, որ հետեւում է հարատին, նման է
գորտի, որ ցանկանում է մեծութեամբ հա-
ւասարուիլ ցուլի: Մի՛ մոռանաք առածք-
ուող վերմակիդ (եօրդանիդ) համեմատ
մեկնիր:»

Այնու ամենային այսպիսի անմիտ

մարդիկը անպատճ չեն մնում: Եթէ
նրանցից մէկը իւր արտաքին շքեղութեամբ
հանդիսանում է մի հասարակութեան մէջ,
բոլորը յարգում են նրան, կարծելով, որ
նրա ներքին յատկութիւնները ևս նոյնպէս
շքեղ են. բայց երբ փոքր ՚ի շատէ ծանօ-
թանում են նրա զաղափարի հետ, հեռա-
նում են. իսկ երբ բոլորովին ձանաչում են
նրան և համեմատելով նրա ներքին զգաց-
մունքը արտաքին շքեղութեան հետ, ար-
համար հանքով են նայում նրա վերայ և
մերժում են իրանց հետ յարաբերութիւն
ունենալուց: Այս միայն մի լոկ ցանկու-
թեան հետեւանք է:— Նև արդարեւ ի՞նչ
օգուտ ենք ստանում այն ցանկութիւնից,
որը միայն մեզ ցոյց տալու համար ենք
ծնում և որի պատճառաւ անշափ զըժ-
ուարութիւններ ենք կրում: կազզուր ՞ում
է նա, արդեօք, մեր վատ առողջութիւնը.
կամ միմիթար ՞ում է մեր գժբաղգութեան
ժամանակը և կամ աւելացն ՞ում է, արդեօք,
փոքր ինչ մեր համարումն:

Ու, նա միայն շարժում է մեղ զէպի
նախանձ և շտապեցնում է մեր կորուստը:

Պրեմն ասացէք ինդրեմ, յիմարու-
թիւն չէ, այսպիսի չնչին, նպատակների
համար պարտքերի տակ ընկնելը:

Դիցուք թէ մի խանութում առաջար-
կում են ձեղ ապրանք և ն ամիս ժամա-
նակ են տալիս ձեր պարտքի վճարելուն:
Մարդուս նեղ զրութիւնը շատ անդամ
իրաւոնք է տալիս իրան օգուտ քաղել
յարմար առիթից—հազնուիլ առանց փո-
ղի: Իսկ դուք շատ գոհ էք լինում... Բայց
մտածեցէք, թէ ինչ կըլինի հետեւանքը.
Դուք ձկեցիք ձեր ազատութիւնը ուրիշ-
ների իշխանութեան տակ: Եթէ դուք ո-
րոշեալ ժամանակին չըմձարեք ձեր պարտ-
քը, պէտք է ամաչէք ձեր պարտատի-
րոջ հանդիպելիս և շատ կարելի է, մին-
չե անդամ, դողաք. • կըսկաէք անդադար
մտածել և խղճահարուիլ փոքր առ փոքր
կըսովորէք սուտ խօսել և կընկնէք սու-

խօսութեան փշոտ և զբուելի ձանապարհը:
«Մտախօսութիւնը ասում է փ. Իիշարը.
«Երկրորդ աստիճանի յանցանկ է. իսկ
պարտքերի մէջ մննելը՝ առաջին:» ԱՄՏԱ-
ԽՕՍՈՒԹԻՒՆԸ շրջում է պարտքերի հետ
ձեռք ձեռքի տուած, աւելացնում է նաև:

Մարդս ազատ ծնուելով չըպէտքէ և
ոչ մի ժամանակի ենթարկի իւր ազատու-
թիւնը ուրիշների իրաւանցը, կարմրի կամ
դողայ նրանց առջեւ. բայց շատ անդամ
նրա սկսած դործերի ընթացքը տանում
է իրան զէպի աղքատութիւն և ոչնչա-
ցնում է նրա բոլոր ազնիւ զգացմունքնե-
րը: — «Ֆալտարկ քուրձը (չուալը) դժվա-
րութեամբ կըկանզնի:» — Ինչ կ'ասէիք
դուք այն մարդկանց, որոնք առանց պատ-
ճառի արգելէին ձեղ հազնուիլ մի հա-
րուստ պարոնի կամ տիկնոջ նման, ասե-
լով որ ձեղ կըտուժենք և բանդ կըճինք:
Դուք, անկասկած, կըպատասխանէիք, որ
մէնք ազատ ենք և իրաւունք ունինք

հազնուելու, ինչպէս և կը կամենանք և
թէ, այդպիսի արգելք չեն կարող լինել
ինքնակառավարութեան դէմ: Ահա, մի
ինդիր, որը դուք չ'ք ցանկանում հաս-
կանալ թէ այն օրից, երբ ձեզ իրաւունք
էք տալիս պարտքերի տակ ընկնել ձեր
ազատ կամքով ստորացնում էք ձեր ինք-
նասիրութիւնը, միայն նրա համար, որ
շուայլութեամբ և արտաքին շքեղութեամբ
փայլիք: Չեր պարտատէրը լիսկատար ի-
րաւունք ունի զըկել ձեզ ձեր բոլոր ազա-
տութիւնից և բանդ ձգել տալ կամ պա-
հանջել որ ծախմն ձեր բոլոր ստացուած-
քը, եթէ դուք ժամանակին չ'ք վճարի
ձեր պարտքերը:

Երբ դուք պարագ էք վերառնում,
վճարելու օրն ձեզ շատ հեռու է թվում:
բայց ժամանակը շատ շուտ է անցնում:
իսկ պարտատիրոջ միշտութիւնը այս մա-
սին աւելի սուր է, քան թէ պարտապա-
նինք: Նրանք ժամանակից չ'են թողնիլ

անցնի ոչ մի օր, ոչ մի րոպէ և ոչ մի
վայրկեան: Քանի որ դուք ձեր ասմաքնը
ստած ուրախութիւն կ'անեք, առանց
մտածելու պարագի վճարելու ժամանակի
վերայ, յանկարծ ձեր պարտատէրը կըծե-
ծի ձեր դուռը. իսկ եթէ դուք կըմտա-
ծէք ձեր պարագի վճարելու ժամանակի
վերայ, որը սկզբումն ձեզ շատ հեռու էր
թվում, յանկարծ կըտեսնէք մօտացած:
Օրերը անցնում են իրար յետևից և ժա-
մանակը թունի պէս յառաջ է պանում:
«Սեծ պասը շատ կարծ է երեւում այն
մարդկանց համար, որոնք զատկին վճա-
րելք ունին»:

Եթէ դուք գտնվում էք այնպիսի դրու-
թեան մէջ, որ կարող էք առանց մի քա-
նի աւելըրդ ծախսեր անելու կառավա-
րութիւն աւելի լաւ կլներ, եթէ ձեր փո-
ղերը պահէիք սե օրուայ կամ ծե-
րութեան ժամանակի համար: Ինչպէս նոր
ծագելիս արեգակը իւր ճառագայթները

չէ տարածում ամէն տեղը նոյնապէս և մեր
բազզի անխոր շատ անդամ չէ պտտում։
Մարդոյ եկամուտքը շարունակաբար և հաս-
տատ չէ լինում։ բայց կեանքի պահանջ-
ները մինչեւ գերեզմանը ուղեկից է լինում
նրան։ «Եատ հետ է» ասումէ Փ. Ռիշարը,
«երկու վառարան շինել քան թէ մէկ վա-
ռարանի մէջ միշտ կրակ պահել» աւելա-
ցնում է նա. «Լաւ է առանց ընթրիքի
քնել քան թէ զարթնել պարտքով»—
Աշխատեցէք, որքան կարող էք և խնայո-
ղութեամբ դործ զրէք, ինչ որ ունիք. այս
մէկ օրէնք է, որ անակը ոսկի է դարձնում։
և եթէ հետեւէք այս օրէնքին, հաւատա-
ցէք, որ ոչ ձեր կեանքի կարիքները ձեզ
կրծանրաբեռնեն և ոչ էլ ձեր հարկերը
ձեզ կը վախեցնեն։

IV) Աիրելի բարեկամներ, թէ և այս
բոլորը, ինչ որ ձեղ ասացի, առողջ դա-
տողութեան և շատ փորձերի արդասիքնն,
բայց դուք միք մոտածիլ որ մարդուս

ասլրելու համար միայն բաւական է աշշ-
խատանքը, խնայողութիւնը և խոհեմու-
թիւնը, առանց Աստուծուն փառաբանե-
լու։ Ձերմեռանդ սրտով աղօթեցէք Աստու-
ծուն. խնդրեցէք Նրանից օգնութիւն ձեր
դորձերի համար, և անողորմ միք լինիլ
գէսի այն մարդիկը, որնք խսկապէս կա-
րութութիւն ունին և կարօտ են ձեր օդ-
նութեանը. օգնեցէք և միիթարեցէք
Նրանց միք մոռանալ չարչարանք կրող
Յովեցն, որի պատմութիւնը գեղեցիկ նկա-
րագրուած է Աստուծաշունչ զբքում։

Այժմ ցանկանալով հրաժարուիլ ձեզա-
նից, իմ բարեկամներ, բոլորովին յուսով
եմ, որ իմ խօսքերը ձայն բառբառոյ յա-
նապատի չըհամարէք. «կեանքի փորձա-
ռութիւնները ուսումնարանից բարձր է.
այստեղ է միակ ուսումնարանը այն ան-
միտ մարդկանց համար, որնք, թէ և շատ
քիչ բայց այնու ամենայնիւ մէկ բան են
սովորում։ Նրաւ, որ Ճշմարիտ է Փ. Ռի-

շարի նկատողութիւնները. թէ գլուրհուրդ տախն հեշտ բան է, բայց ատիպել մէկին հետևելու և կատարելու իւր խորհուրդները՝ անկարելի» բայց և պէտք է 'ի նկատի ունեցած. այն մարդիկը, որոնք չեն լսում այսպիսի խորհուրդների, շատ անզամ ընկնում են սխալանաց մէջ. եթէ նրանք չան բանականութեան ձայնին, շուտով նա իրան կըծանօթացնի նրանց:

Այս խօսքերից յետոյ ծերը լսեց: Բոլոր հանդիսականները ուշաղրութեամբ լսում էին նրան և նրա ասածներին համակրում: բայց նրա հեռանալուց յետոյ բոլըը նրա խորհուրդներին ընդդէմ վարուեցին, ինչ պէս որ առհասարակ լնում է իւրաքանչեւր քարոզեց յետոյ: — Հրապարակական աճրդախօսութիւնը սկսվեց և Ռիշարիքարովները ուշաղրութեամբ լսող և համակրող պարոնները իրար զլուխ կոտրելով առաջ էին շտապում և վաճառուելիս բաների գները աւելացնում:

Ես նկատեցի միայն, որ քարոզեցը ուշաղրութեամբ կարդացել էր իմ օրացոյցը և Ճիշդ ըմբռնել այն բոլոր բարոյական խրատները, որոնք ես հաւաքել էի 25 տարուայ ընթացքում: Այս անընդհատ ծանօթութիւնները և քաղլուածքը գուցէ շատերին ձանձրալի լիներ բայց այն հեղինակից, որի խրատներից օգուտ է քաղլուած: Իմ անձնասիրութիւնս բաւականին գոհ էր, թէ և այդ բոլորի մէկ տասներորդ մասն հազեւ ինձ էր պատկանում: իսկ մնացեալն ես իմ աշխատասիրութեամբս սեփհականացրել էի ուրիշ փորձառու մարդկանց քարոզներ լսելով և նրանց շարադրութիւնները կարդալով: — Խը և իցէ ծերունու քարոզները մեծ տպաւորութիւն գործեց ինձ վերայ և ես նրանից այն օգուտն ստացայ, որ, թէ և մտածում էի ինձ համար նոր հազուստ առնել այդ աճրդախօսութեան ժամանակ և հենց այդ նպատակաւ էլ գնացել էի, բայց մտածեցի, որ

դեռ իմ հին շորերով կարող եմ կառավա-
րութիւն — ու չառայ:

Աթէ դուք ել սիրելի կարդացողներ,
հետեւեք Փորձառու Թիշարի Խորհուրդնե-
րին և աւելորդ ծախսեր չ'անեք, ինչպէս
և ես չ'արեցի, հաւատացէք, որ լաւ կը-
ապրէք:

ՀԵՐՈՍԵՎԱՆԸՆԻ ՄԻՔԱՅ

առաջարկութիւն Բ: Փրանգինի

ՆԵՐ ՄՇԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

Միք՝ մոռանալ, որ ժամանակը ար-
ծալ է: այն մարդը, որ միջոց ունի աշ-
խատելու օրեկան երեք մանեթ, նա օր-
ուայ կեսը պարապութեան մէջ է անցկաց-
նում, թէ և այդ միջոցում գուցէ նա մի-
քանի կոպէկից աւելչէ մսխել, անկասկած,
նա իրանից շատ գոհ կը կլինի, որ խոհե-
մարար է վարուել բայց նա մոռանումէ,
որ չափազանց շատ բան է կորսրել—մի-
քանի ազատ ժամեր, որոնց միջոցում նա
կարող էր աշխատել մէկ ու կէս մանեթ:—
Միք՝ մոռանալ նոյնպէս, որ հաւաքար-
հավելիու և « արծալ է: Աթէ ձեր պար-
ապատերը յետաձգումէ, ձեր պարտքերի

վճարման ժամանակը, նա զբանով ձեզ
միջոց չէ տալիս, որ օգուտ քաղէք
նրանից, նա 'ի նկատի ունի իւր օգուտը—
տոկուր: Այն մարդը միայն կարողէ փող
աշխատել, որը մեծ կարողութիւն և հա-
մարութիւն ունի, մի և նոյն ժամանակը և
խոհեմութեամբ է բանացնում: 'Ի նկատի
ունեցէք, որ փողը մի առանձին յատկու-
թիւն ունի—ինքն իրան շատանալ: Փողը
խոհեմարդար բանացնելով՝ 'աշխատումէ
դարձեալ փող, տոկոսիքով տալով բերումէ
տոկոսիք, —տոկոսիքը դարձեալ տոկոսիք.
և այսպես նա շուտով շատանումէ: Որ-
քան դէպի անտառի խորքը գնաս, այնքան
փայտերը կը շատանան:

Այս կերպով գործ զրած մանէթը դառ-
նումէ տամն մանէթ և անդադար աւելաց-
նելով տոկոսիքը իրար վերայ, մի քանի
ժամանակց յետոյ կը դաւնայ հարիւրներ:
Քանի որ այս կերպով մեր փոշերը իրար
վերայ աւելացնելով գործ գնենք, նրանց

շուտով կը բազմապատճենք և մեծ օգուտ
կըստանանք: Եթէ մէկը մորթումէ յղի
խոզը, նա ոչնչացնումէ և նրանից ծնուե-
լու բոլոր ձագերը:—Ով շռայլաբար ծա-
խուումէ, դիցուք, մէկ տա՛ի, նա կորանումէ:
այն բոլոր օգուտը, որը կարող էր ստանալ
նրանից, մինչեւ անդամհարիւր ուկի: Մտա-
ծեցէք, որ եթէ օրէկան յետ ձգելու լի-
նիք 15 կոպէկ, կարող էք տարուայ վեր-
ջում ունենալ 50 մանէթից աւելի: Այս-
պիսի չնչեն գումարները մնանք շատ ան-
գամանատեղի կրանումնենք: Ամէն մի մարդ,
որ փոքր ի շատէ կարողութիւն ունի, նա
կարող է միշտ հազար մանէթ դրամաղլուի
5% կամ 6% տոկոսով տալ: իհարկէ, կա-
րելի չէ ամէն մարդոյ խորհուրդ տալ այս
անելու, քանի որ գործունեայ մարդոյ ձեռ-
քին այսքան գումարն կարողէ հրաշքներ
գործել:

Այն մարդը, որ բարեխղճմտաբարէ վար-
վում և իւր վարկը (համարութիւն) չէ կոտ-

րիլ, նա կարող է իւրաքանչեւր զիպուռա-
ծում համարձակ դիմել իւր ծանօթներին
և բարեկամներին, նրանցից նիւթական օգ-
նութիւն խնդրելու, եթէ հարկաւոր լինի.
բոլորն էլ մեծ ուրախութեամբ կ'օգնեն
նրան, քանի որ նրա ճշմարտութիւնը ճա-
նաչում են. — իմ կարծիքով սո փոքր բան
չէ: — Տնտէսարար աշխատանքից և խնայո-
ղութիւնից յետոյ, ամենադիխաւոր տեղը
բռնում է ճշութեամբ. ոչինչ բան
այնքան օգուտ չէ կարող տալ մարդու և
այնքան նրա համարումը չէ բարձրացնիլ,
որքան տուած խօսքը ճշմարտութեամբ
կատարելն. — Ճշութիւն և ազնուութիւն
ունիցէք ամէն գործում: Եթէ դուք որո-
շելք ձեր պարտքի վճարելու ժամանակն,
միք ուշացնել և ոչ մի ժամ, եթէ ոչ,
ձեր բարեկամների զրաքանը միշտ դադարկ
կը դժոնէք ձեզ համար, կամ աւելի լաւն
ասել կը կորսնեք ձեր համարումն նրանց
առջեւ — ձեր երկրորդ խնդրքին բացասական

պատասխան կստանաք: Առեւդրական գոր-
ծերում ամենափոքր հանգամանքներին
հարկաւոր է ուշադրութիւն դարձնել: Նրբ
ձեր պարտատէրը տեսնի ձեզ միշտ պարապ-
մունքի մէջ, — առաւօտուց մինչև երեկոյ, —
նա անհոգ կոլինի և մի քանի ամիս էլ
աւելի կըսպասի. որովհետեւ յոյս ունի ան-
պաձառ ստանալու. բայց եթէ նա աեսնի
ձեզ բիլեարդ խաղալիս, կամ ձեր ձայնը լսի
գնեսնից, այնպիսի ժամանակ, երբ դուք
պէտքէ պարապէիք ձեր գործերով, նա
վաղը իսկոյն կըզայ ձեզ մօտ իւր պահան-
ջով, որ իսկոյն վճարէք իւր փողերը: Ձեր
նոր սկսած գործերում, մանաւանդ որոնց
մասին քիչ տեղեկութիւն ունիք, շատ
զգուշութեամբ վարուեցէք. սրանից կա-
րելի է եղրակացնել, թէ որքան Ճիշդ և
ազնիւ կըլինէք ձեր ապագայ գործունէյու-
թեան ասպարեզում: Հակառակ դէպքում,
ձեր պարտատէրերն էլ չեն հաւատալ ձեր

խօսքերին և սրանով՝ կը կոտրվի ձեր հաւամարումն:

Մի՞ք սխալուիլ և մի՞ք շընալ, շատ միամիտ մարդկանց նման, թէ այն բոլոր ապրանքը կամ փողը, որ ուրիշները ձեզ հաւատ ընծայելով տուելնեն, ձեզ է պատկանում. և անհեռատեսութեամբ շուպլաբար մի՞ք մնխիլ Որպէս զի այսպիսի սխալնքի մէջ չընկնէք, գրեցէք ձեր բոլոր մուտքն ու ելքն, այն ժամանակը բոլորը ձեզ ճիշդ յայտնի լինելուց յետոյ, ձեզ իրաւունք չ'էք տուլ աւելորդ ծախսեր անելու. որքան պակացնեք ծախսերի թիւը, այնքանով կ'աւելացնէք ձեր մուտքը, և հետևաբար կ'ազատուիք չքաւրութիւնից:

Այս ընթացքը բունելով՝ դուք կը գտնէք ձեզ համար հարստանալու ամենահաստատ ձանապարհը. — բոլորը բովանդակումէ երկու խօսքի մէջ— աշխատանիվ և խնայողութեան: Մի՞ք վասնել ոչ ժաման-

նակը և ոչ փողը, բայց աշխատեցէք, որքան կարելի է, օգուտ քաղել թէ մէկից և թէ միւսից: Առանց աշխատանքի և իննայողութեան դուք ինքներդ ձեզ կը կորանէք. իսկ ունենալով այդ երկուսը՝ աշխատանքը և խնայողութիւնը, կարող էք ձեզանից հեռացնել ամէն անյաջուղութիւններ: — Ուշ ազնիւ միջոցով ինչ և իցէ մէկ բան է ձեռք բերում, ով իննայոցութեամբ է ծախսեր անում, նա, անպատճառ, վաղ թէ ուշ կը հարստանայ:

II

(Մի ամենակարեւոր խորհուրդ այն մարդկանց, որոնք ցանկանում են հարստանալ.

Փող ունենալն շատ հեշտ բան է միայն այն մարդկանց համար, որոնք գիտեն գործ ածեն:

Եթէ տարեկան վեց ոսկի ունիք դորձա-
դրութեան մէջ, դուք կարող եք ձեռք
բերել նրանով մինչև հարիւր ոսկի, եթէ
միայն խղջմուարար և շատ զգուշութեամբ
գործ դնէք: Ով ամէն օր իզուր տեղուց
մախումէ 5 կոպէկ, նա տարեկան կը մախի
6 ոսկուց աւելի. այսինքն հարիւր ոսկի
գումարի տոկոսիք: Ով օրէկան 5 կոպէկի
ժամանակ է կորսնում, նա իւր ազատ
կամքով նոյնպէս զրկումէ իրան հարիւր
ոսկու օգուտից: Ով անգործունէյութեան
մէջ մնալով կորսնումէ օրէկան մէկ մանէ-
թի ժամանակ, նա ոչ թէ միայն զրկում
է այդ փողից, որ բոլորովին ճիշդ է,
այլ և ծովն է ձգում այն օգուտները, որը
կարող էր այդ ժամանակից շահուիլ, և
որը իւր կեանքի ընթացքում կարող էր
մի նշանաւոր գումար կազմուիլ:

III

Ելի մէկ խորհուրդ
Ով իւր ապրանքը ժամանակով է վա-

ճառում, սովորաբար նա այնպիսի զին է
նշանակում, որը հավասարվումէ ապրան-
քի արժողութեանը և թոյլ տուած ժա-
մանակի տոկոսիքին: Այսպէս ուրեմն ով
ժամանակով է ապրանք առնում, նա վճա-
րում է և տոկոսիք. իսկ ով կանխիկ (նա-
զա) վճարում է փողը, նա տոկոսիքը կա-
րող է ինքն շահացնել: Սրանից երեսում է,
որ ժամանակով զնած ապրանքի համար
վճարում են և տոկոսիք: Խնչպէս երեսում
է, աւելի ձեռտու է պատրաստի դրամով
առնել, քան թէ ժամանակով. որովհետեւ
ժամանակով վաճառողը մտածելով, որ իւր
պարտապանը գուցէ և ժամանակին ճշ-
գութեամբ չը վճարի իւր փողը, որը շատ
անգամ է պատահում, սորա համար նա
աւելացնում է իւր ապրանքի արժողու-
թեամբ:

Խնչպէս տեսնում ենք ժամանակով ապ-
րանք գնող պարոնները աւելի են վճարում:
քան թէ որքան արժէր իրանց զնած ապ-

բանքը.— իսկ կանխիկ գլուխով առնողները ազատվումեն, կամ կարող են ազատուել այդ աւելորդ ծախսերից (վճարներից:)

IV

Ի՞նչ միջոց է հարկաւոր գործ գնել, որ միշտ պրապանում փող ունենալ.

«Երկայումն ամէն մարդ զանգատվում է փողի պակասութեան համար եթէ այդ պիսի կարուեալներին կարելի լինէր մի հնարք ցոյց տալ, որ միշտ փող ունէնային, — իհարկէ— զա շատ բարի գործ կը լինէր. հենց այս պատճառաւ եռ ցանկանում եմ ցոյց տալ մի պարզ ճշմարդութիւն, որին հետեւելով ամէն մարդ կարող է իւր քսակը փողով լիքն ունենալ և առատութեան մէջ ապրել. Սա շատ հասարակ բան է, և այս կանոնները իրադրծելու համար մեծ դժուարութիւն չէ հարկաւոր:

Առաջինը՝ ճշմարդութիւնը և աշխատանքը ձեր ամեն գործերում ուղեկից ունեցէք:

Երկրորդը՝ օրէկան այնքան մնխեցէք, որ ձեր եկամաքից աւելի քիչ լինի:

Եյս կանոններին հետեւելով դուք ձեր քրպանը միշտ փողով լիքը կը տեսնէք և կը դադարէք ամէն վայրիկեան աղաղակելուց թէ ունենք քաղցած ենք։ Ձեր պարտատերերը ձեզ չեն չարչարիլ. սովոր ձեզ չե տանջիլ և ձեր շքեղաղարու շորերը չեն փոխարինուեիլ անշաւք շորերին. Այն ժամանակը ձեր կեանքը խաղաղ ու հանգիստ կը լինի և ձեր սիրտը կը թնդայ ուրակութենից: Նթէ աշխատէք հետեւելու իմ խորհուրդներին, կը զիմէք զէպի բաղտաւորութեան ասպարեզը: Հեռացը բէք ձեզանից տրտմութիւնը. անձնատուր միք լինել յուսահատութեան և աշխատեցէք անկախ ապրել: Այն ժամանակը դուք կը լինիք ազատ մարդիկ. ոչ հարուստնե-

թից կը թափնուիք, ոչ կըստորանաք նրանց
առջեւ և ոչ էլ ձեզ այնքան դժբաղու կը-
կարծէք որովհետեւ անկախութիւնը, ոչ
թէ միայն մեծ գործերում, այլ և ամենա-
փոքր հանգամանկներում բաղստաւորաց-
նում է մարդուս հաւասարացնելով նրան
ամենահպարտ և ամենապնիւ ու երե-
ելի մարդկանց հետ։ Ո՛հ, դուք միայն
խոհեմ եղէք, ձեր աշխատանքը ձեզ միշտ
ճանապարհորդ կըլինի առաւօտուց մինչեւ
երեկոյ։ կ'ազնուանայ ձեր խիղճը, — սրա-
նից յետոյ չը մոռանաք խնայողաբար գործ-
դնել ձեր փողերը, պահպանել (յետ ձել)
մի ամենափոքր մասը. այն ժամանակը
միայն դուք կը համնեք կատարեալ բաղ-
տաւորութեան. — անկախութիւնը ձեզ
կարժանացնի զրահի և թագի, — և այն
ժամանակը դուք մեծահողութեամբ կընա-
յիք կերպասի շորերի վերայ և առանց
ստորանալու, համօրձակ կը դիտէք հա-

րուստ զարդերով զարդարուած վասարա-
րց մարդկանց վերայ։

V

Առւիչ (շուպի)

Իմ կարծէքով, մենք շատ բաներում
կարող էինք բարելաւացնել մեր կեանքը
և հեշտութեամբ տանել մեզ պատահելիս
դժբաղութիւնները, եթէ միշտ, մեր ա-
մէն մի գործում, զգուշութեամբ վարու-
եինք և թանդ չը վճարէինք մեր սուլիչե
համար. որովհետեւ եթէ շատերը դժբաղ-
տանում են, այդ իրանց անուշադրութիւ-
նից և անկանոն կեանք վարելուցն է:
Դուք, իհարկէ, ինձ կը հարցնեք, թէ սրա-
նով ես ինչեմ ուզում ձեզ ասել: — Ես այս
ըուլէյիս ձեզ կը բացալրեմ պատմելով մի
անցք այս սուլիչե մասին, որը պատահել
է ինձ հետ: — Մէկ տօն օր, երբ ես գեռ
5—6 տարեկան էի, իմ բարեկամներս ինձ
բաւականին փող նուիրեցին; Ես հենց այն

բոպէյին շտապեցի դէսլի խաղալիք ծաւ-
եռղի խանութը. բայց ճանապարհին ինձ
պատահեց մի երախայ, որը սուլիչ էր
ծախում. նրա սուլիչի ճայնը այնքան ինձ
ախորժելի թուեց, որ ես վճարեցի նրան
իմ ունեցած բոլոր փողերս, մինչև վերջին
կոպէյին անդամ: Ուրախացած յետ վազեցի
տուն և սկսեցի անընդհատ սուլիլ, այն-
քան, որ շատ զգուացրի մեր տանեցւոց:
Եղբայրներս և քոյրերս իմանալով, որ ես
այդ անպիտան (նրանց կարծիքով) խաղա-
լիքի համար վճարել եմ՝ իմ բոլոր փողերս,
հաւատացրին ինձ, որ ես խաբուել եմ: —
իմ վճարած փողերը տասն անդամ աւելի
էր սուլիչի արժողութիւնից: Այս բանը
ինձ սաստիկ զայրացրեց, մանաւանդ, որ
ինձ հասկացրին, եթէ ես չը շտապէի և
այնքան անզգոյշ չը վարուեի, այնքան փո-
ղով ես կարողէի շատ խաղալիքներ առնել.
բացի սրանից բոլորն էլ ինձ վերայ ծիծա-
զում էին. իսկ ես բարկութիւնից (ջեզրու)

լայ էի լինում. այս բանը ինձ սաստիկ
տիսրութիւն պատճառեց, քան թէ զուար-
ծութիւն: — Այս հանգամանքը ինքը
ըստ ինքեան, մի չնչին բան է. բայց այն-
պէս մեծ ներգործութիւն արաւ ինձ վե-
րայ և այնպիսի մեծ օգուտներ տուեց, որ
նրանից յետոյ, երբ ես ցանկանում էի այն-
պիսի մի չնչին բան առնել, իսկոյն յիշում
էի այս անցքը ասելով ինքս ինձ՝ ես
շատ չեմ վճարիլ սուլիչի համար և այս-
պէս պահպանում էի ձեռքս ընկած փողե-
րը:

Համելով երիտասարդական հասակիս,
և կեանքի ասպարեզ մանելով՝ ես սկսեցի
սւշաղրութեամբ նկատել մարդկանց բու-
նած գործերը... ես անդադար պատահում
էի այնպիսի մարդկանց, որոնք թանդ էին
վճարում մեկ սուլիչի համար:

Պատահելով շատ անդամ այնպիսի
մարդկանց, որոնք ձգտվում էին հասնելու մի
բարձր պաշտօնի և սորու համար զոհում

էին իրանց ժամանակը, ազատութիւնը և
մինչեւ անգամ իրանց բարեկամներին, և
ինքս միշտ մտածում էի. «այս մարդը
թանգ է վճարում իւր սուլիչի համար»:

Երբ մի ուրիշը մտնելով շռայլութեամբ
պարապող մի խմբի մեջ, նրանց հետ
խօսում ու ժամանակ էր կորսնում, մի և
նոյն ժամանակը մոռանում էր իւր սէպհա-
կան գործերը, ևս ասում էի. «աս նոյն-
պէս թանգ է վճարում իւր սուլիչն»:

Մի ուրիշ անգամ պատահելով մի ժլա-
տի, որը զբկում էր իրան ամենահար-
կաւոր բաներից, ամէն ուրախութիւննե-
րից հեռանում էր ժլատութեան պատճա-
ռով, ոչ ծանօթ ունէր և ոչ բարեկամ, և
այս նրա համար, որ միայն փող ժողովի,
օխեղ մարդ,» ասում էի ես. «որու ևս
թանգ ես վճարում քո սուլիչն»:

Երբ պատահմամբ հանդիպում էի մի
մարդու, որ ուշ չըդարձնելով իւր առող-
ջապահական կանոնների վերայ, հետեւ

ում էր միայն զգայական զուարձութիւն-
ներին և որը խղճի ազնիւ զգացմունք-
ները թողած չ'էր հոգում իւր բարեկե-
ցութեան համար, ևնեծ է քո սխալը» ա-
սում էի ես այն ժամանակը. «որու ուրա-
խութեան փոխանակ դժբաղտութիւն ես
որոնում և նոյնպէս թանգ վճարում քո
սուլիչն»:

Երբ մէկ ուրիշ՝ ուշադրութիւն ըլ-
դարձնելով իւր եկամուտքի վերայ, սիրում
էր չափազանց շքեղ զարդարուիլ, կահ
ու կարասիք առնել, փայլուն կառքերով
շրջագայել, վերջը իւր պարտքերի թիւը
աւելացնելով լոնիսում էր բանդի մեջ, «էհ»
ասում էի ես. «որու ևս թանգ վճարեցիր
քո սուլիչն»:

Երբ ինձ պատահում էր տեսնել մի գե-
ղեցիկ, համեստ և խէլօք աղջիկ, որի ճա-
կատադիրը ձգել էր նրան մի խիստ և
տղետ մարդոյ ձեռք և նա իւր կոպիտ և
անքաղաքավարի վարմունքով ամէն ըոպէ

աանջում էր նրան, «ինչքան ցաւալի է»
ասում էի ես. «այս խեղջ աղջեկը նոյպես
թանգ վճարեց իւր սուլիչին»:

Ա երջապէս ես համոզուեցի, որ մարդ-
կանց գժբաղտութիւնների ամենամեծ մա-
սը ծագում է նրանից, որ մենք իրակա-
նապէս չենք նայում գործին, և մի չնչն
սուլիչի համար ահազին գներ ենք վճա-
րում:

Այնու ամենայնիւ, ես զգում եմ, որ
այդպիսի մարդկանց հարկաւոր է կարեկից
լինել և չընայելով այն բոլոր հետ միջոց-
ներին, որ ես բաղդ ունեցայ ձեզ առա-
ջարկալու, կան և երկրիս վերայ այն աս-
տիճանի գայթագղեցուցիչ բաներ, որ եթէ
նրանք էլ աճրդախօսութեամբ ծախուեին,
շատ կարելի է, որ ես ևս ընկնէի այդ
փորձանքի մէջ և իմ կեանքում մի ան-
գամ էլ թանգ վճարեի որպիսի և իցէ մի
սուլիչի համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0343567

